ԳԱԳԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

«ՀԱՇԻՇԻՆԵՐԸ» ԵՎ ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Իսմայիլականություն, նիզարիներ, հաշիշիներ, Կիլիկյան Հայաստան, Հեթում Ա, Լևոն Բ, Մամլուքյան սուլթանություն, Բայբարս ալ-Բունդուկտարի, հայ-մամլուքյան հարաբերություններ, Հյուսիսային Ասորիք, քաղաքական մահափորձեր:*

Եգիպտոսի և Ասորիքի մամլուքյան սուլթան ալ-Մանսուր Կալավունի (կառ. 1279-1290 թթ.) պալատական քարտուղար և վարքագիր Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Զահիրի Tašrīf al-ayyām wa-l-ʿuṣūr fī sīrat al-Mālik al-Manṣūr («Ալ-Մալիք ալ-Մանսուրի կյանքի փառավոր օրերի և ժամանակաշրջանի մասին») երկում՝ հիջրայի 681 թվականի (1282/1283 թ.) ներքո, հետևյալ վկայությունը կա. «Այս թվականին ժամանեցին իսմայիլական կառավարիչների (nuwwab al-daʿwa, այն է՝ «[կրոնական] ուխտի» կամ «միաբանության» կառավարիչների) կողմից Սսի տիրոջ մոտ ուղարկված իսմայիլական դեսպանները (rusul al-daʿwa՝ իրենց հետ բերելով երկու տարվա համար նրա վրա դրված [հարկային] պարտավորությունը (al-qarār): Նրանք նրանից բերեցին 11600 դիրհամ, որ նրա վրա դրել էր Իսմայիլական կարգը, և հանձնվեց սուլթանական գանձարան»[1]:

Անշուշտ, շատ հետաքրքիր հաղորդում է, որ, անկասկած, պարզաբանման կարիք ունի: Մինչև հաղորդման աղբյուրագիտական քննությանն անցնելը՝ հարկավոր է ճշտել, թե ովքեր են այստեղ ակնարկված իսմայիլականները, որոնց նկատմամբ իբր հայոց արքա Լևոն Բ-ը (կառ. 1269-1289 թթ.) հարկային պարտավորություն ուներ:

«Իսմայիլականները» հետևորդներն են իսլամի շիական ճյուղի երկու հիմնական կրոնադավանաբանական ուղղություններից մեկի՝ «իսմայիլիզմի» կամ «իսմայիլականության», որն առաջացել է վեցերորդ շիական իմամ Ջաֆար ալ-Սիդդիկի (մահ. 765 թ.) մահից հետո իմամության օրինական ժառանգման հարցի շուրջ առաջացած վեճի արդյունքում: Նրանք, ովքեր կողմնակից էին, որ հաջորդ իմամ հռչակվի Ջաֆարի կրտսեր որդի Մուսա ալ-Քազիմը (մահ. 799 թ.),

---

[1] **Ibn ʿAbd al-Ẓāhir**, *Tašrīf al-ayyām wa-l-ʿuṣūr fī sīrat al-Mālik al-Manṣūr*, bi-taḥqīq ***Murād Kāmil***, bi-murāgaʿa ***Muḥammad ʿAlī al-Naǧǧār***, al-Qāhira, 1961, ṣ. 24.

սկզբնավորեցին շիա իսլամի մի առանձին վարդապետություն: Այս ուղղությանը հարողները իմամների նշանակումը շարունակեցին մինչև 12-րդը և կոչվեցին «Տասներկուերորդականներ»: Ընդ որում, 12-րդ իմամին՝ Մուհամմադ իբն ալ-Հասանին, նրանք համարում են «թաքնված իմամ», որը պիտի հայտնվի որպես mahdī(իմա՝ «մեսիա» կամ «փրկիչ») Ահեղ Դատաստանի օրվանից առաջ: Իսկ նրանք, ովքեր մտածում էին, որ իմամության ժառանգորդ պիտի համարվի Ջաֆարի ավագ որդին՝ հանգուցյալ Իսմայիլը (մահ. 762 թ.), կոչվեցին «իսմայիլականներ»: Սրանք էլ կարծում էին, որ Իսմայիլն իրականում չի մահացել, այլ դեռ հայտնվելու է որպես qā'im (բառացի՝ «հարություն առնող», «հառնող», «համբառնող») կամ mahdī[2]:

Իսմայիլականությունն իր զարգացման ընթացքում նույնպես ճյուղավորվել է՝ ծնունդ տալով մի շարք կրոնական ուսմունքների և աղանդավորական հզոր շարժումների ու համայնքների, ինչպիսին էր, օրինակ, կարմատների համայնքը: Իսմայիլական դավանության հետևորդներն անգամ պետական կազմավորումներ են ստեղծել՝ ի դեմս Եգիպտոսի Ֆաթիմյանների (909-1171 թթ.), և Ալամուտի Նիզարիների (1095-1256 թթ.)[3]:

Ինչպես որ իսմայիլականության դեպքում, նիզարիական աղանդի ստեղծումը նույնպես աղերսվում էր իմամության ժառանգման լեգիտիմության խնդրին: Ֆաթիմյան խալիֆա ալ-Մուսթանսիրը (կառ. 1036-1094 թթ.) իր կառավարման վերջում գահաժառանգության իրավունքից զրկում է իր որդուն՝ Նիզարին, իր հաջորդ հայտարարելով կրտսեր որդուն՝ ալ-Մուսթալիին (կառ. 1094-1101 թթ.), ում, ի վերջո, Եգիպտոսի հայազգի վեզիր և երկրի փաստացի կառավարիչ ալ-Աֆդալ Շահնշահը (1074-1094 թթ.) հաստատում է խալիֆայության գահին: Նիզարն իր ջատագովների հետ ընդվզում է եղբոր և ալ-Աֆդալ Շահնշահի դեմ, բայց հաջողություն չի ունենում և սպանվում է: Նրա հետևորդները կոչվեցին «նիզարիներ» (կամ «հաշիշիներ»)՝ հիմք դնելով նիզարիական իսմայիլականության կրոնադավանաբանական ուսմունքին: Նիզարի զինակիցներից Հասան իբն Սաբբահը[4], Եգիպտոսից Պարսկաստան գալով, սկսում է իր

---

2 **W. Madelung**, "Ismaʿiliyya", in *The Encyclopaedia of Islam (New edition)* (հետայսու՝ EI[2]), vol. 4 (IRAN-KHA), E. J. Brill, Leiden, pp. **198-206**.

3 Նիզարիական իսմայիլականների վերաբերյալ բավական հարուստ գիտական գրականություն կա: Նրանց ընդհանուր պատմությանը նվիրված առավել կարևոր աշխատությունները, որ ասպարեզի զարգացման ուղենիշներ են սահմանել, հետևյալներն են՝ **G. S. Hodgson**, *The Order of the Assassins*, The Hague, 1955; **B. Lewis**, *The Assassins: A Radical Sect in Islam*, London: Weiden feld and Nicolson, 1967; **F. Daftary**, *The Ismaʿilis: Their History and Doctrines*, Cambridge: Cambridge University Press, 1990 (2nd edition, 2007), pp. 301-504:

4 Կյանքի և գործունեության մանրամասները տե՛ս **նույնի**՝ "Ḥaṣan-i Ṣabbāḥ and the Origins of the Nizārī Ismaʼili Movement", in *Mediaeval Ismaʼili History and Thought*, ed. by ***F. Daftary***, Institute of Ismaili Studies, Cambridge: Cambridge University Press, 1996, pp. 181-204 և **C.**

գաղափարները քարոզել՝ հետևորդների մեծ բանակ հավաքելով։ Արդեն 1090 թ. նիզարիները նրա գլխավորությամբ տիրանում են էլբուրսի լեռների մի շարք անառիկ ամրոցների, որոնցից Ալամուտը դառնում է նիզարիականության և Նիզարիների պետության կենտրոնը։ Անգամ Սելջուկյան սուլթանության բիրտ ճնշումն անկարող է եղել կաշկանդել Նիզարիական պետության հիմնադրման գործընթացը[5]։ Ավելին, Ալամուտից շարունակ da'ī-ներ (քարոզիչներ) էին ուղարկվում նաև ասորիքյան շրջաններ՝ այնտեղ նիզարիական համայնքներ ստեղծելու և դրանք ղեկավարելու[6]։ Ասորիքյան նիզարիների առաջնորդներն անվերապահորեն ընդունում էին Ալամուտի գերակայությունը։ Միայն թերևս Ռաշիդ ալ-Դին Սինանի օրոք (1162-1193 թթ.), ով ֆրանկներին հայտնի էր «Լեռան ծերունի» (արաբ.՝ Šayḫ al-ǧabal) անվամբ[7], ասորիքյան հաշիշիները ինքնավարության զգալի մակարդակ են ձեռք բերել Ալամուտից։ Ասորիքյան նիզարիների գլխավոր հենակետն ալ-Քահֆ բերդն էր, ապա՝ ալ-Մասյաֆը։ Նրանց տնօրինության տակ եղած բերդերի թիվը հասնում էր մեկ տասնյակի[8]։

Նիզարիների կենսունակության գրավականը պայքարի և իրենց ոսոխների վրա հոգեբանական ճնշում գործադրելու հատուկ տեխնիկան էր։ Սրա հիմնական բաղադրիչը հակառակորդների առաջնորդներին, քաղաքական և ռազմական ռահվիրաներին իրենց fidā'ī[9]կոչվող անձնազոհ, մահապարտ ռազմիկների միջոցով անկանխատեսելիորեն սպանելու նրանց մարտավարությունն էր, վրեժխնդրությունը։ Պատահական չէ, որ հաշիշիներն իրենց պատմության ամբողջ ընթացքում Մերձավոր Արևելքի անգամ հզորագույն տիրակալների սարսափն են եղել, և բոլորն, ովքեր խնդիր են ունեցել նրանց հետ, մշտապես են-

---

Hillenbrand, "A Neglected Source on the Life of Hasan-i Sabbah, the Founder of the Nizari "Assassin" Sect", *Iran*, vol. 55:1, pp. 3-10:

5 **C. Hillenbrand**, "The Power Struggle Between the Saljuqs and the Ismaʿilis of Alamūt, 1094-1124: The Saljuq Perspective", in *Mediaeval Ismaʿili History and Thought*, ed. by ***Farhad Daftary***, Cambridge: Cambridge University Press, 1996, pp. 205-219.

6 Ասորիքյան նիզարիների պատմության և դրա սկզբնաղբյուրների մասին տե՛ս **B. Lewis**, "The Sources for the History of the Syrian Assassin", *Speculum*, vol. 27, No. 4 (Oct., 1952), pp. 475-489, ինչպես նաև **Nasseh Ahmad Mirza**, *Syrian Ismailism. The Ever Living Line of the Imamate, A. D. 1100—1260*, London: Routledge, 1997:

7 **B. Lewis**, "Kamāl al-dīn's biography of Rāšid al-dīn Sinān", *Arabica*, t. 13, Fasc. 3, Leiden: Brill, 1966, pp. 225-267.

8 Իրանում և Ասորիքի տարածքում հաշիշիներին պատկանած բերդամրոցների մասին տե՛ս **F. Stark**, "The Assassins' Castle of Lambesar", *The Geographical Journal*, vol. 80, No. 1, 1932, pp. 47-56; **W. Ivanow**, *Alamut and Lamasar; two mediaeval Ismaili strongholds in Iran; an archaeological study*, Ismaili Society, Teheran, 1960; **Nasseh Ahmad Mirza**, *Syrian Ismailism,* p. 58*;* **P. Willey**, *Eagle's nest. Ismaili castles in Iran and Syria*, I. B. Tauris, London & New York, 2005:

9 **F. Daftary**, "Fedāʾī", in *Encyclopaedia Iranica*, vol. IX, Fasc. 5, 1999, pp. 468-470.

թարկվել են նրանց զոհը դառնալու վտանգին։ ԺԱ-ԺԳ դարերում տարածաշրջանում տեղի ունեցած «աղմկոտ» մահափորձերի մեծ մասը նիզարիների ձեռքի գործն է եղել, և հարյուրավոր տիրակալներ՝ խալիֆաներ, սուլթաններ, վեզիրներ, էմիրներ, քրիստոնյա արքաներ և իշխաններ են նրանց դաշույնից ընկել։ Օրինակ, 1092 թ. նրանք սպանել են սելջուկ սուլթաններ Ալփ-Ասլանի (1063-1072 թթ) և Մելիք-Շահի (կառ. 1072-1092 թթ.) վեզիր Նիզամ ալ-Մուլքին, ով, թերևս, առաջինն էր, որ համարձակվել էր թշնամանալ Հասան ալ-Սաբբահի հետ՝ փորձելով կասեցնել նիզարիական իսմայիլականների համայքի ստեղծման նրա ջանքերը[10]։ 1094 թ. Կահիրեում հենց նրանց ձեռքով է սպանվել ալ-Աֆդալ Շահնշահ հայազգի վեզիրը։ Սպանել են երեք խալիֆաների, որոնցից երկուսը Աբբասյան դինաստիայի, մեկը՝ Ֆաթիմյան[11]։ 1152 թ. նրանց ձեռքից ընկել է Տրիպոլիի իշխան Ռայմոն Բ-ը (կառ. 1137-1152 թ.)[12]։ Ասորիքի հաշիշիները քանիցս մահափորձ են կատարել Այյուբյան սուլթան Սալահ ալ-Դինի դեմ[13]։ 1272 թ. նրանք փորձել են սպանել նաև Անգլիայի արքայազն Էդուարդին, որը միայն հրաշքով է փրկվել մահից և ապաքինվելով ծանր վիրավորումից՝ մի քանի ամիս անց ժառանգել Անգլիայի գահը Էդուարդ Ա Երկայնասրուն (1272-1307 թ.) գահակալական անունով։ Բազմաթիվ ուրիշ օրինակներ կարելի է վկայակոչել[14]։

Միջնադարյան մուսուլմանական գրականության մեջ նիզարիական իսմայիլականները հաճախ ḥaššāšī կամ ḥašīšī (հոգն.՝ ḥaššāšiyya կամ ḥaššāšiyyūn կամ ḥašīšīyyūn)[15] են անվանվել։ Գիտական գրականության մեջ այս անվանման

---

[10] **M. Th. Houtsma**, “The Death of Niẓām al-Mulk and Its Consequences,” *Journal of Indian History*, series 3/2, 1924, pp. 147-160 և հատկապես **H. Halm**, *Kalifen und Assassinen: Ägypten und der Vordere Orient zur Zeit der ersten Kreuzzüge 1074-1171*, C. H. Beck Verlag, München, 2014.

[11] **D. G. Tor**, “A Tale of Two Murders: Power Relations between Caliph and Sultan in the Saljūq Era”, *Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft*, vol. 159, № 2, 2009, pp. 279-297.

[12] **S. Runciman**, *History of the Crusades*, Volume II: The Kingdom of Jerusalem and the Frankish East, 1100-1187, Cambridge: Cambridge University Press, 1951, p. 333.

[13] **B**. **Lewis**, “Saladin and the Assassins”, *Bulletin of the School of Oriental and African Studies*, University of London, vol. 15, № 2 (1953), pp. 239-245.

[14] Սպանությունները անձնազոհության գնով գործելու հաշիշիների վերաբերյալ ընդունված մոտեցման մասին տե՛ս **D. Cook**, “Were the Ismāʿīlī Assassins the First Suicide Attackers? An Examination of Their Recorded Assassinations”, in *The Lineaments of Islam: Studies in Honor of Fred McGraw Donner,* ed. by ***P. M. Cobb***, Leiden: Brill, 2012, pp. 97-117:

[15] Խաչակիրների միջոցով այս անվանման աղճատված տարբերակները տարածվել են արևմտյան գրականության մեջ և ի վերջո եվրոպական լեզուներում *assassin* («վարձու մարդասպան») բառիմաստը ստացել։ Նրանց մասին պատմությունները մուտք են գործել նաև եվրոպական բանահյուսական գրականություն։ Տե՛ս **Chambers F. M., “**The Troubadours and the Assassins”, *Modern Language Notes*, vol. 64 (4), 1949, pp. 245-251; **J. Wood**, “The Old Man of the Mountain in Medieval Folklore”, *Folklore*, vol. 99, No. 1 (1988), pp. 78-87:

ստուգաբանության բազմաթիվ հիպոթեզներ են առաջ քաշվել[16]։ Սիլվեստեր դե Սասիի կողմից գիտական շրջանառության մեջ դրված տեսակետի հետևորդները ḥaššāšī կամ ḥašīšī անվանումը կապում են հաշիշ (հնդկական կանեփ) անունը կրող թմրանյութի հետ՝ պնդելով, թե սա հավանաբար պայմանավորված է եղել թմրանյութերի ազդեցությամբ սպանություններ գործելու նրանց սովորության հետ։ Այնուամենայնիվ, միջնադարյան աղբյուրներում գտնված չէ նիզարիների կողմից հաշիշի օգտագործման վերաբերյալ որևէ ծանրակշիռ փաստ կամ հստակ վկայություն։ Հետևաբար, ինչպես Բերնարդ Լյուիսն է կարծում, գուցե ḥaššāšī կամ ḥašīšī անվանումը տրվել է նիզարիներին զուտ որպես վիրավորանք՝ ավելի շատ նրանց տարօրինակ վարքագիծը պարսավելու, այլ ոչ թե նրանց սովորությունները բնութագրելու համար[17]։

Նիզարիական պետությունը պաշտոնապես գոյատևել է մինչև 1256 թ., երբ Հուլաղուի գլխավորած մոնղոլական զորքերը տիրացել են Մայմունդիզին, գրավել են Ալամուտը, հաջորդ տարում՝ Լամբասարը (Լամասարը)։ Նիզարիների վերջին հենակետը՝ Գիրդ-Քուհը, ընկել է միայն 1270 թ. , իսկ 1275 թ. ձախողվել է Ալամուտը վերագրավելու նիզարիների փորձը[18]։ Բար Հեբրեոսը մոնղոլների կողմից Ալամուտի և այլ ամրությունների առման մասին այսպիսի ոգևորությամբ է գրում. «Այս օրհնյալ նվաճումներով Աստված գթասրտություն ցուցաբերեց արաբների («մուսուլմանների») և քրիստոնյաների արքաների հանդեպ, որոնք ահաբեկման և դողի մեջ էին ապրում իսմայիլականների վախից, ովքեր դաշույն կրողներ և անմեղ արյուր հեղողներ էին»[19]։

Սա, բնավ, հաշիշիների պատմության ավարտը չէր։ Մամլուքյան դինաստիայի հաստատումից հետո դեռ ավելի քան երկու տասնամյակ նիզարիները պահպանում էին իրենց վերահսկողությունը Ասորիքի մի շարք ամրոցների նկատմամբ։ Նրանց կենտրոնատեղին համարվող Մասյաֆ բերդը և մի քանի այլ

---

16 **Antoine Isaac Silvestre de Sacy**, *Mémoire Sur la dynastie des Assassins et sur l'origine de leur nom* / par M. Silvestre de Sacy: lu à la séance publique de l'Institut, du 7 juillet 1809, Universitäts und Landesbibliothek Sachsen-Anhalt, 1809; **McCarthy K. M.,** "The Origin of Assassin", *American Speech*, vol. 48 (1/2), 1973, pp. 77-83.

17 **B. Lewis,** "Ḥashīshiyya", in *EI*², vol. 3 (H-IRAM), Leiden: E. J. Brill, 1986, pp. 267-268։ Նիզարի իսմայիլականներին հաշիշի օգտագործման հետ կապող հիպոթեզի չհիմնավորվածության մասին տե՛ս **F. Daftary**, "The "Order of the Assassins:" J. von Hammer and the Orientalist Misrepresentations of the Nizari Ismaʿilis", *Iranian Studies*, vol. 39, № 1, 2006, pp. 71-81.

18 **J. A. Boyle**, **"**The Ismāʿīlīs and the Mongol Invasion", in *Ismāʿīlī Contributions to Islamic Culture*, ed. by Seyyed Hossein Nasr, Imperial Iranian Academy of Philosophy, Tehran, 1977 pp. 5-22; **F. Daftary**, *The Ismaʿilis*, pp. 392-398.

19 *The Chronography* of **Gregory Abû'l-Faraj** [**Bar Hebraeus**], the Son of Aaron, the Hebrew Physician, the First Part of his Political History of the World, vol. I, trans. ***Ernest A. Wallis Budge***, Oxford University Press, London, 1932 (reprinted by Gorgias Press, 2003), p. 423.

բերդեր (ալ-Քահֆ, ալ-Կադմուս, ալ-Խավաբի, ալ-Ռուսաֆա, Ուլլայկա, ալ-Մունայկա և այլն) սուլթան Բայբարսը գրավել է միայն 1270-1273 թվականների միջակայքում՝ դրանք ենթարկելով մամլուքյան կենտրոնական իշխանությանը[20]:

Հմուտ մարդասպանների համբավ վայելելով՝ հաշիշիները սպանում էին նաև կաշառքով, իրենց մատուցված ծառայության դիմաց, իրենց արված լավությունը փոխհատուցելու նպատակով, հատկապես երբ համընկնում էին նրանց և պատվիրատուի քաղաքական շահերը: Մերձավորարևելյան քաղաքական առաջնորդները շատ հաճախ օգտվում էին նրանց «մասնագիտական գործունեությունից»՝ պատվիրելով իրենց քաղաքական հակառակորդների կամ թշնամիների սպանությունը՝ այդու «չարյունոտելով իրենց ձեռքերը» և պարտակելով կատարված ոճիրին իրենց մեղսակցության հանգամանքը: Զորօրինակ, մամլուքյան ալ-Մալիք ալ-Զահիր Բայբարսի (կառ. 1260-1276 թթ.) պատվերով հաշիշիները 1270 թ. սպանել են Ֆիլիպ Ա Մոնֆորցուն (1246-1270 թթ.)՝ Տյուրոսի տիրոջը, և մի շարք այլ մահափորձեր կատարել[21]:

Փաստեր կան ենթադրելու, որ մամլուքյան սուլթանները նիզարի fidā'ī-ների ծառայություններից օգտվում էին նաև հետագայում՝ նրանց քաղաքական սպանություններ կատարելու հանձնարարականներ տալով, ինչպես որ ալ-Մալիք ալ-Նասիրի (կառ. 1293-1294, 1299-1308, 1309-1341 թթ.) դեպքում էր[22]:

Հաշիշիների համբավին քաջատեղյակ էին նաև Կիլիկյան Հայաստանի քաղաքական վերնախավում: Վերոբերյալ դեպքից բացի՝ հայկական և արաբալեզու աղբյուրներից մեզ հայտնի են նրանց և հայ իշխանավորների հարաբերությունների և առնչությունների մի քանի այլ դրվագներ ևս: Նախ, հատկանշական է, որ նիզարի իսմայիլականները հայկական միջավայրում և այդու նաև մատենագրության մեջ կոչվել են «հաշիշք» կամ «մուլհեդք» կամ «մլհետք»՝ (արաբե-

---

20 **Abdul-Aziz Khowaiter**, *Baibars the First: His Endeavours and Achievements*, The Green Mountain Press, London, 1978, pp. 124-126; **P. Thorau**, "Die Burgen der Assassinen in Syrien und ihre Einnahme durch Sultan Baibars", *Die Welt des Orients*, Bd. 18, 1987, S. 132-158; **F. Daftary**, *The Isma'ilis*, pp. 399-402.

21 Տե՛ս **R. Amitai-Preiss**, *Mongols and Mamluks: The Mamluk-Īlkhānid war, 1260-1281*, Cambridge University Press, Cambridge, 1995, p. 148: Անգլիայի արքայազն Էդուարդի մահափորձի պատվիրատուի ամենահավանական թեկնածուն նույնպես սուլթան Բայբարսն էր: Տե՛ս **Runciman S.,** *A History of the Crusades: Vol. III (The Kingdom of Acre and the Later Crusades)*, Cambridge: Cambridge University Press, 1951, p. 338 և **Amitai-Preiss**, *Mongols*, p. 99, 127:

22 **Ch. Melville**, "'Sometimes by the Sword, Sometimes by the Dagger': the Role of the Isma'ilis in Mamlūk-Mongol Relations in the 8th/14th Century", *Mediaeval Isma'ili History and Thought*, ed. by ***F. Daftary***, pp. 248-263.

րեն mulḥid բառից, որ «հերձվածող» է նշանակում): Օրինակ, Կիրակոս Գանձակեցին նրանց նկարագրում է որպես ռազմիկներ, «որք սովոր են նենգութեամբ սպանանել զմարդիկ»[23]: Նա մի պատմություն է ներկայացնում Գանձակ քաղաքի՝ Օրղան անունով մի իշխանավորի մասին, ով հարկապահանջությամբ նեղում էր քաղաքի բնակչությանը. «Մատեան առ նա ոմանք՝ մինչդեռ գայր ընդ փողոց քաղաքին, իբր թէ զրկանս կրեալ իցէ նոցա յումեքէ, և առ նա մատեան տալ իրաւունս: Յուցին նմա թուղթ ի ձեռին ունելով՝ աղաղակեցին և ասեն. «Դա՛տ, դա՛տ: Եւ իբրեւ զտեղի առ նա եւ կամէր հարցանել, թէ ո՞յր իցէ նեղեալ զնոսա, նոքա աստի և անտի յարեան ի վերայ նորա, և սրով, զոր ունէին ի ծածուկ, խոցոտեալ սպանին զնա: Եւ այսպէս բարձաւ չարն չարեաւ ի միջոյ: Եւ զսպանողսն նորա հազիւ կարացին սպանանել նետիւք, զի զբազումս խոցոտեալ փախեան ընդ մէջ քաղաքին. զի այսպէս սովոր են առնել ազգն այն, որ բռնացեալ են յամուր տեղիս, զոր Թուն եւ Թանջահ կոչեն, այլ և ի մայրիսն Լիբանանու»[24]: Կիրակոսն այնուհետ իր գիտելիքներն է հաղորդում նիզարիների և մարդասպանության նրանց տեխնիկայի վերաբերյալ: Նա գրում է, որ նրանք իրենց արյան գինն էին վերցնում իրենց իշխանից (իմա՝ dāʿī-ից), որին պաշտում էին Աստծո փոխարեն, նրան էին տալիս իրենց կանանց և որդիներին և գնում էին, ուր որ ուղարկում էր, երկար ժամանակ դեգերում էին՝ զանազան կերպարանքներ ընդունած, մինչև որ պատեհ ժամանակ էին գտնում իրենց առաքելությունը կյանքի կոչելու համար: Նրանք անվերապահորեն կատարում էին իրենց իշխանի հրամանները՝ մինչև անգամ իրենց անձը չխնայելով[25]:Հայ պատմիչների երկերում կարելի է բազմաթիվ ուրիշ վկայություններ գտնել զանազան ռազմական և քաղաքական գործիչների դեմ հաշիշիների կատարած մահափորձերի մասին՝ օրինակ, մոնղոլ զորապետ Զաղաթայի, որ Իվանե Զաքարյան իշխանի մտերիմ ընկերն էր[26], Անտիոքի իշխան Բոհեմունդի[27], Երուսաղեմի թագավոր Կոնրադ

---

23 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, աշխատ. ***Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի***, Երևան, 1961, էջ 227:

24 Նույն տեղում: «Թուն և Թանջահ»-ի և «Լիբանանի անվտանգ վայրեր» ասելով՝ պատմիչը նկատի ունի Հյուսիսային Իրանում և Ասորիքում նրանց պատկանած բերդերը: Այնուամենայնիվ, դժվար է ասել, թե Պարսկաստանում նիզարիներին պատկանած հատկապես որ բերդերի աղավաղված անվանումներն են Կիրակոս Գանձակեցու արձանագրած «Թուն»»-ը և «Թանջահ»-ը:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, էջ 264:

27 *Հեթում Պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը*, աշխատասիրությամբ ***Կ. Մաթևոսյանի***, Երևան, «Մուղնի» հրատ., 2011, էջ 49, ինչպես նաև ***Մանր ժամանակագրություններ*** *XIII-XVIII դդ.* (հետայսու՝ ՄԺ), **Հ.** I, կազմեց ***Վ. Ա. Հակոբյան***, Երևան, 1951, էջ 62: Խոսքը Բոհեմունդ Դ Միականանու ավագ որդի Ռայմոնդ դը Պուատյեի մասին է, ում նա 1213 թ. նշանակել էր Անտիոքի կառավարչի պաշտոնում: Վերջինս, սակայն, նույն թվականին սպանվում

Մոնֆերացու[28], *Եգիպտոսի Այյուբյան սուլթան Սալահ ալ-Դինի*[29], *Անգլիայի արքայազն Էդուարդի*[30], *ինչպես նաև Հյուսիսային Իրանում և Ասորիքում նրանց պատկանած բերդերի անկման մասին*[31]: *Իր «Թուղթ առ վարդապետս Հիւսիսոյ» թղթում հաշիշիներին հիշատակել է Գրիգոր Տղա կաթողիկոսը. «... եւ ամենայն ոք ծարաւի է խաղաղութեան եւ սիրոյ աստուածայնոց, Ֆռանկք, Յոյնք, Սուրիացիք, Նեստորականք, եւ Իսմայելացիք որ եւ Հաշիշիք»*[32]:

Հաշիշիների և հայոց վերնախավի առնչության մասին ժամանակագրական առումով առաջին վկայությունը թվագրվում է 1221-ով, երբ նրանց ձեռքով սպանվել է Լևոն Ա արքայի մանկահասակ դուստր Զաբելի խնամակալ նշանակված Սիր Ատանը (Ադան, Ադամ, Ատոմ), որ քաղկեդոնականություն էր դավանում: Այս միջադեպից հետո՝ նույն թվականին գրված մի Ավետարանի չափածո հիշատակարանում կարդում ենք.

«Զպայլն զայն սրով խոխոխեցին
Այլասեռ ազգն Հաշիշի»[33]:

Սպանության պատճառն այն էր, որ պայլությունը ստանձնելուց որոշ ժամանակ անց սույն Ատոմը հանդգնել էր նկրտում ունենալ թագավորական իշխանության նկատմամբ կամ ինչպես Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն տարբերակներից մեկում է ասվում. «... խորհէր ի միտս յինքն առնուլ զիշխանութիւնն»[34]: *«Սիր Ատանն սպանեալ եղեւ խորհրդով իշխանացն», — պայլի սպանության մասին գրում է Սամուէլ Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկը՝ դեպքի մասին պատմելով ՈԿԵ թվի տակ (1218 թ.)*[35]: *Այսպիսով,*

է Տարտուսում «հաշիշիների» կողմից: Մահափորձը տեղի է ունեցել եկեղեցում՝ ժամերգության ժամանակ: Տե՛ս **Cahen Cl.,** *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Paris: Geuthner, 1940, p. 620:

28 **ՄԺ**, հ. II, կազմեց ***Վ. Ա. Հակոբյան***, Երևան, 1956, էջ 60:

29 *Ժամանակագրութիւն տեառն **Միխայէլի Ասորւոց Պատրիարքի***, տպարան Սրբոց Յակովբեանց, Յերուսաղէմ, 1871, էջ 478-479 և հմմտ. **նույնի**, 1870, Յերուսաղէմ, էջ 478:

30 **Սմբատայ Սպարապետի** *Տարեգիրք*, աշխատասիրութեամբ ***Հ. Սերովբէ Ագըլեանի***, Վենետիկ, 1956, էջ 254; **Հեթում Պատմիչ**, *Ժամանակագրութիւն*, էջ 54, ինչպես նաև **նույնի՝ ՄԺ**, հ. II, էջ 76: Խոսքը Անգլիայի վերոհիշյալ արքայազնի մասին է, ով 1272 թ. խաչակրաց արշավանքի կազմակերպման նպատակադրությամբ Աֆրա էր եկել: Տե՛ս ծան. 21:

31 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 376:

32 *Գրիգոր Կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի*, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1865, էջ 86:

33 **Ana Sirinian**, "Da Drazark a Roma: una pagina di storia ciliciana nel colofone del manoscritto Arch. Cap. S. Pietro B 77", *Bnagirk' yišatakac', Bnagirk' yisatakac'. Dall'Italia e dall'Armenia. Studi in onore di Gabriella Uluhogian*, a cura di ***V. Calzolari, A. Sirinian, B. L. Zekiyan***, Bologna 2004, p. 74.

34 **Միքայել Ասորի**, *Ժամանակագրութիւն*, 1870, էջ 514: Հմմտ. **նույնի՝** 1871, էջ 505:

35 **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, աշխատասիրությամբ ***Կ. Մաթևոսյանի***, «Նաիրի», Երևան, 2014, էջ 239:

Սիր Ատանի սպանությունը հաշիշիներին պատվիրել էին հայ իշխանները՝ ամենայն հավանականությամբ Կոստանդին Գունդստաբլի գլխավորությամբ, որի՝ իշխանության նկատմամբ ունեցած նկրտումները նույնպես շուտով բացահայտ էին դառնալու[36]: Սիր Ատանի՝ հաշիշիների ձեռքով սպանության մասին վկայություն ունի նաև ասորի պատմիչ Բար Հեբրեոսը՝ մի փոքրիկ լրացմամբ. «Այդժամ Իսմայիլականները նետվեցին Սիր Ադանի՝ հայոց թագավորության կառավարչի վրա, մի նեղ փողոցում, որ Սիս քաղաքում գտնվող մեր Մար Բար Սաումայի եկեղեցի էր տանում»[37]:

Հաշիշիների և հայոց վերնախավի հարաբերությունների՝ ժամանակագրական առումով հաջորդ վկայությունը գտնում ենք արդեն արաբական պատմագրության մեջ: Դամասկոսցի պատմիչ Աբու Շաման (մահ. 1267 թ.) հաղորդում է, թե 1260 թ. Հոմսի ճակատամարտից օրեր անց՝ Մուհարրամ ամսի կեսերին, «լուր ստացվեց որ թաթարները վերադարձել են, սակայն Սահյունի (Ṣaḥyūn) տերը նրանց մի մասին ճանապարհին գերել է, ապա հաշիշիները սպանել են Սսի տիրոջը, Ալլահն անիծի նրան, և սրա պատճառով կռիվ է ընկել թաթարների և Սսի տիրոջ որդու միջև: Թող Ալլահը հաստատի դա և ավարտուն դարձնի մուսուլմանների հաղթանակը»[38]:

Աբու Շամայի հաղորդումը փոխառել է նաև ալ-Զահաբի (մահ. 1348 թ.) պատմիչը՝ առանց արժանահիշատակ լրացումներ կատարելու, բացառությամբ թերևս նրա, որ Աբու Շամայի տեքստի al-hašīšiyya-ի փոխարեն նրա «Իսլամի պատմության» բնագրում al-fidāwiyya al-hašīšiyya է, այն է՝ «մահապարտ հաշիշիները»[39]:

Այնուհանդերձ, հաղորդման վերջնամասից էլ («Թող Ալլահը հաստատի») երևում է և պատմության ընթացքից էլ հայտնի է, որ Հեթումի սպանության մասին այս վկայությունը պարզապես Դամասկոսում տարածված ասեկոսե է եղել, և պատմիչը հարկ է համարել արձանագրել այն: Թեև շատ հավանական է, որ հայոց արքայի դեմ մահափորձ իսկապես տեղի ունեցած լինի (գուցե մամլուքյան իշխանությունների պատվերով)՝ իհարկե, անհաջող ելքով:

Ասորիքի իսմայիլականների և Կիլիկիո հայոց վերնախավի առնչությունների հաջորդ շրջանը թվագրելի է 1260-ական թվականների սկզբներով: Խոսքը

---

36 Այս միջադեպը մանրամասն լուսաբանված է: Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, Պատմա-բաղաքագիտական հետազոտություն (Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան), Երևան, 2007, էջ 243-244:

37 **Bar Hebraeus**, *Chronography*, p. 379.

38 **Abū Šāma**, Tarāǧim riǧāl al-qarnayn al-sādis wa-l-sābiʿ al-maʿrūf bi-Ḏayl ʻalā al-Rawḍatayn, bi-taḥqīq **Ibrāhīm Šams al-Dīn**, Bayrūt, Dār al-kutub al-ʿilmiyya, 2002, ṣ. 324.

39 **al-Ḏahabī**, *Tārīḫ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-aʿlām*, ǧ. 48, bi-taḥqīq ʻ***Umar*** ʻ***Abd al-Salām Tadmurī***, Bayrūt, Dār al-kitāb al-ʻarabī, 1999, ṣ. 73-74.

վերաբերում է 1262-1264 թվականների ընթացքում Ասորիքի հյուսիսային շրջաններ Հեթում թագավորի ձեռնարկած արշավանքներին: Հատկանշական է, որ Հյուսիսային Ասորիքի և մասնավորապես Հալեպի շրջակայքի բազմաթիվ բնակավայրեր այդ ժամանակ ունեին նիզարի իսմայիլական բնակչություն: Դատելով աղբյուրներում պահպանված նկարագրություններից՝ Հեթումի ռազմական գործողություններն ավելի շատ ավարառուական և հակառակորդի վրա հոգեբանական ճնշում գործադրելու նպատակներ են հետապնդել, քան թե նվաճողական: Բացառված չէ, որ այս արշավանքները հրահրված լինեին Հուլաղու իլխանի կողմից, ով, անձամբ զբաղված լինելով Ջոչիի ուլուսի խան Բերքեի դեմ լայնածավալ պատերազմով, զրկված էր Ասորիքում նոր մարտական գործողություններ սանձազերծելու հնարավորությունից:

Հալեպի մերձակա բնակավայրերի դեմ Հեթումի առաջին արշավանքը տեղի ունեցավ հիջրայի 660 թ. վերջերին (1262 թ.): Այս արշավանքի մասին քիչ ավելի հանգամանալից տեղեկություններ են հաղորդում ալ-Յունինին (մահ. 1326 թ.), Իբն ալ-Դավադարին (մահ. 1335 թ.), Մուֆադդալ իբն Աբի ալ-Ֆադաիլը (մահ. 1358 թ. հետո), ինչպես նաև Իբն Քասիրը (մահ. 1373 թ.): Նրանցից ալ-Յունինիի մոտ մասնավորապես կարդում ենք. «Այդ թվականին Սսի զորքերը անտիոքցի հետևակայինների հետ միասին հարձակվեցին Հալեպի շրջանի ալ-Ֆուա, Սալմին (պետք է լինի՝ Սարմին – Գ. Դ.), Ջաբալ Բայլուն (պետք է լինի՝ Լայլուն – Գ. Դ.), ալ-Հուկկա (մեզ անհայտ է – Գ. Դ.) բնակավայրերի վրա՝ թալանի և ավարառության ենթարկելով դրանք: Սակայն այդ ժամանակ նրանց դեմ իր զորքով ելավ Ալա ալ-Դին ալ-Շիհաբին՝ Հալեպի փոխարքան, և ջարդեց նրանց իսկ մի մասին էլ գերեվարելով՝ ուղարկեց Եգիպտոս, որտեղ նրանց երկատեցին»[40]: Այստեղ թվարկված բնակավայրերի մեծ մասը դեռ նախորդ դարից շիա իսմայիլական բնակչություն ուներ: Իզզ ալ-Դին Իբն Շադդադը (մահ.

---

40 **Al-Yūnīnī**, *Ḏayl Mirāt al-zamān*, al-tabʿa al-ūlā, ğ. 1, Maṭbaʿat Dāʿirat al-Maʿārif al-ʿUṯmāniyya, Ḥaydārābad, ṣ. 496; **Ibn al-Dawādārī**, *Kanz al-durar wa-ğāmiʿ al-ġurar*, ğ. 8, bi-taḥqīq ***Ūlriḫ Hārmān***, al-Qāhira, 1971, ṣ. 90; **Ibn al-ʿAssāl Mufaḍḍal ibn Abī al-Fadāʿil**, *Al-Nahğ as-sadīd wa-durr al-farīd fīmā baʿda tārīḫ ibn al-ʿAmīd* / Moufazzal ibn Abil-Fazaïl, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par ***E. Blochet***, *Patrologia Orientalis*, t. 12, Paris, 1919, ṣ. 100 [442] (հետայսու՝ al-Nahğ (PO12)), ինչպես նաև **նույնի՝** *al-Nahğ*, bi-taḥqīq ***Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn ʿAlī al-Sayyid***, Dimašq, Dār al-saʿd al-Dīn, 2017, ṣ. 112 (հետայսու՝ al-Nahğ (**2017**)); **Ibn Kaṯīr**, *Al-Bidāya wa-l-niḥāya*, ğ. 17, bi-taḥqīq ***ʿAbd Allāh ibn ʿAbd al-Muḥsīn al-Turkī***, Dār Hağar, 1998, ṣ. 437; **Al-Maqrīzī,** *Kitāb al-sulūk li-maʿrifat duwal al-mulūk*, ğ. 1. 2, bi-taḥqīq ***Muḥammad Muṣṭafā Ziyāda***, Maṭbaʿat al-taʾlīf wa-l-tarğama wa-l-našr, al-Qāhira, 1957, ṣ. 476.: Հմմտ. **Canard M.,** "Le Royaume d'Armenie-Cilicie et de Mamelouks jusq'au traité de 1285", *Revue des Études Arméniennes*, vol. IV, 1967, p. **223** (մեջբերում է ալ-Մակրիզիին); **Amitai R.,** "In the Aftermath of ʿAyn Jālūt: The Beginnings of the Mamlūk-Ilkhānid Cold war" (հետայսու՝ "ʿAyn Jālūt"), *Al-Masāq: Journal of the Medieval Mediterranean*, vol. 3. 1, 1990, p. **11**:

1285 թ.) իր al-Aʿlāq al-Ḫaṭīra fī ḏikr umarāʾ al-Šām wa-l-Ǧazīra («Թանկագին և մեծարժեք վկայություններ Ասորիքի և ալ-Ջազիրայի իշխանների մասին») պատմատեղագրական աշխատության մեջ Սարմին բնակավայրի մասին գրում է. «Նրա բնակչության մեծ մասն այժմ իսմայիլականներից են, և նրանք այնտեղ dar al-daʿwa («քարոզչության տուն») ունեն: Այս «տանը» թաթարների կողմից Հալեպի և նրա շրջակայքի գրավումից ի վեր իսմայիլականների կողմից նշանակված կառավարիչ կար, մինչև որ մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Զահիրը [հիջրայի] 665 թվականին (1266/1267 թ.) խլեց այն նրանց ձեռքից»[41]:

Սարմինից ոչ հեռու էր գտնվում Ǧabal al-Summāq կոչվող բնակատեղին[42], որի մասին հալեպցի Քամալ ալ-Դին իբն ալ-Ադիմը (մահ. 1262 թ.) իր Buġyat al-ṭalab երկում գրում է. «Նրա բնակչության մեծ մասը Ասադ տոհմից են՝ Բանու Քահիլ ցեղից: Նրանց մեծ մասի դավանությունը մեր օրերում նիզարի իսմայիլական է»[43]:

Այս անհաջողությունը չհուսահատեցրեց Հեթումին, ով նույն 661 թ. Սաֆար ամսի սկզբներին (1262 թ. դեկտեմբեր) մեկ ուրիշ արշավանք ձեռնարկեց՝ գրեթե նույն հետագծով: Մամլուքյան պատմիչներից ալ-Յունինին գրում է. «Սսի երկրի տեր թաքֆուրը մեծաքանակ զորք հավաքեց՝ հեծյալներ և հետևակայիններ, և հարձակվեց ալ-Ջումայի վրա՝ Ամկի ուղղությամբ, ինչպես նաև դեպի Ջաբալ Լայլուն, Մաարրաթ Միսրին, Սարմին և ալ-Ֆուա: Նրան ուղեկցում էր ալ-Ֆուայի բնակիչներից իբն Մաջիդ ալ-Ֆուի անունով մեկը: Նա ալ-Ֆուայի բնակիչներից 380 հոգու գերեվարեց»[44]: Պատմիչը շարունակում է, որ Սարմինում հայկական ուժերը բախվեցին մի քանի մամլուք էմիրների (Բահա ալ-Դին ալ-Համավի, Ռուքն ալ-Դին Իսա ալ-Սարվի, Ալամ ալ-Դին Կայսար ալ-Զահիրի) հետ: Վերջիններս, դարանից դուրս գալով, անակնկալի են բերել հայերին, նրանց գլխակորույս փախուստի մատնել և ազատել բոլոր գերիներին, իսկ Հեթումին ընդհարման ժամանակ մի մամլուք զինվոր վայր է գցել ձիուց, և նա հազիվ է մազապուրծ եղել մահից[45]:

---

41 ʿ**Izz al-Dīn Ibn Šaddād**, *Al-Aʿlāq al-Ḫaṭīra fī ḏikr umarāʾ al-Šām wa-l-Ǧazīra*, ǧ. 1. 2, bi-taḥqīq ***Yaḥyā Zakaryā ʿAbbāra***, Dimašq, 1991, ṣ. **48-49**.

42 Նույն տեղում, ṣ. 48:

43 **Ibn al-ʿAdīm**, *Buġyat al-ṭalab fī tārīḫ Ḥalab*, ǧ. 1, bi-taḥqīq ***Suhayl Zakkār***, Bayrūt, 1988, ṣ. 423.

44 **Al-Yūnīnī**, *Ḏayl (Ḥaydārābad)*, ǧ. 1, ṣ. 531; **Mufaḍḍal**, *al-Nahǧ (PO12)*, ṣ. 106 [448], ինչպես նաև **նույնի՝** *al-Nahǧ (2017)*, ṣ. 116; **Ibn al-Dawādārī**, *Kanz*, ǧ. 8, ṣ. 94-95; **al-Ḏahabī**, *Tārīḫ al-Islām*, ǧ. 49, ṣ. 6: Հմմտ. **Amitai**, "ʿAyn Jālūt", p. 11; ʿ**Ādil ʿAbd al-Ḥāfiẓ Ḥamza**, *Niyābat Ḥalab fī ʿaṣr salāṭīn al-mamālīk*, al-Hayʾa al-Miṣriyya al-ʿāmma li-l-kitāb, al-Qāhira, 2000, ṣ. 145-146:

45 **Al-Yūnīnī**, *Ḏayl (Ḥaydārābad)*, ǧ. 1, ṣ. 531: Ալ-Սանին նույնպես անդրադառնում է այս արշավանքին, միայն թե թյուրիմացաբար գրում է, որ դեպքերի մասին հայ և մուսուլման հեղինակներից միակ հաղորդողը Իբն ալ-Դավադարին է: Տե՛ս ʿ**Abd Allāh Ǧāsim ʿAlī Āl Ṯānī**,

Հեթումի ձեռնարկած արշավանքներից առաջինի մասին հայկական աղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Իսկ այս երկրորդ ձեռնարկման մասին խոսում է Սմբատ Սպարապետը, միայն թե իրադարձությունները դնում է ՁԺԳ թվականի տակ (1264 թ.): Նա գրում է. «Թագաւորն Հեթում զօրաժողով արար զզօրս իւր, և բազում ռազմիկ հետեւակօք արշավեաց ի գաւառն Հալպայ ի գեղաքաղաքսն Մարդմսրին և Սրմին, նա և ի Ֆուղա, և շահեցան անդ ինչս ի ծառայս սակաւս»[46]: Սմբատը հաստատում է նաև Հեթումի մահից փրկվելու արաբ պատմիչների վերոբերյալ պատումը. «... և յարձակեցաւ մի ոմն ի նոցանէ և ածեալ զսուրն արքային, և ներքինին Ճօսլին յինքն էառ զզարկուածսն: Եւ դարձեալ կրկնեաց զսուրն առ ի հարկանել զարքայ, և իշխանն Կոստանդին յինքն եբարձ զբերուած սրոյն, և հանեալ զարքայն մեկուսի՝ ինքն եկաց ընդդէմ»[47]:

Հավանաբար Հեթումի այս արշավանքի մասին է ակնարկում ասորի պատմիչ Բար Հեբրեոսն իր «Եկեղեցական ժամանակագրության» մեջ, երբ գրում է. «Ուրդու հասնելու հենց նույն օրը նա[48] ընդունվեց արքայից արքա Հուլաղուի կողմից: Տեղեկացրեց նրան, որ հայերը գրավել են Սարմին քաղաքը եգիպտացիներից և մեծ քանակությամբ ավար բերել՝ այդ թվում՝ մեծ թվով ստրուկներ ու ստրկուհիներ, և որ դեսպանները շուտով կժամանեն՝ Ուրդուին հասանելիք ավարամասը մատուցելու: Արծիվը (նկատի ունի Հուլաղուին) շատ ուրախացավ՝ այս լուրը լսելով»[49]:

Ինչ վերաբերում է դեպքերի հետագա ընթացքին, ապա հայոց թագավորի արշավանքները Հյուսիսային Ասորիքի բնակավայրերի դեմ որոշ դադարից հետո շարունակվեցին մինչև 1264 թ.: Ինչևէ, դրանք բոլորն էլ հիմնականում անարդյունավետ դուրս եկան: Եգիպտոսի սուլթան Բայբարսը, որ ուշի-ուշով հետևում էր այս դեպքերին, Հեթումի ագրեսիվ գործողությունները և մոնղոլներին ցուցաբերած աջակցությունը հարմար առիթ էր դարձնելու՝ նրանից իր

Al-ʿĀlāqāt al-siyāsiyya bayna al-Muġūl wa-Mamlakat Armīnya al-Ṣuġrā 1236-1277 m. wa-aṯaruhā fī al-tārīḫ al-Islāmī, Dār al-ʿulūm al-ʿarabiyya, Bayrūt, 2007, ṣ. 207, ḥ. 3:

46 **Սմբատ**, *Տարեգիրք (1956)*, էջ 242: Տե՛ս նաև **Canard**, "Le Royaume", p. 224:

47 **Սմբատ**, *նույն տեղում*, էջ 242: Չնայած Սմբատի և մամլուք պատմիչների պատումների նմանությանը՝ Ալ Սանին չի նկատում նաև այս արշավանքի թվագրման սխալը, և պատմիչի հաղորդմանն անդրադառնում է 1264 թ. դեպքերի շարադրանքում: Տե՛ս **Āl Ṯānī**, *al-ʿĀlāqāt*, ṣ. 213-214:

48 Պատմիչը հենց իրեն նկատի ունի: Նա ասորի հակոբիկյան եկեղեցու մաֆրիանի պաշտոնը զբաղեցրել է 1264-ից 1286 թվականը:

49 **Bar Hebraeus**, *The Ecclesiastical Chronicle*, An English Translation by ***David Wilmshurst***, Piscataway: Gorgias Press, 2016, p. 272: Տե՛ս նաև **Լ. Յ. Տէր-Պետրոսեան**, *Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ-ԺԳ դերերում (*Հայագիտական Մատենադարան «Բազմավէպ» 28*)*, Վենետիկ, Ս. Ղազար, 1989, էջ 75:

վրեժն առնելու համար: Նա մի այնպիսի պատիժ էր մտմտում Կիլիկյան Հայաստանի համար, որից երկիրը տևական ժամանակ ուշքի չէր գալու:

Սմբատ Սպարապետի վկայությամբ՝ 1272 թ. Հեթումի Մարիա անունով իսմայիլական հարճը (բնագրում՝ «յԻսմայելացւոցն սեռէ») իր մի քանի այլ ցեղակիցների հետ փորձել է թունավորելով սպանել հայոց արքա Լևոն Բ-ին: Սմբատի պատումում երկու ուշագրավ հանգամանք կա: Նախ և առաջ, մի քիչ տարօրինակ է, որ Հեթումն իսմայիլական հարճ է ունեցել և որ նրա անունը Մարիա է եղել: Եվ երկրորդ. եթե այստեղ իրապես նկատի են առնված հաշիշի իսմայիլականները, այլ ոչ թե «իսմաելացիներն» առհասարակ՝ այսինքն «մուսուլմանները», ապա մի քիչ տարօրինակ է հայոց արքային սպանելու համար ընտրված մեթոդը՝ թունավորումը: Չէ՞ որ հաշիշիները սովորություն ունեին դաշույնով սպանել, հրապարակավ, բոլորի աչքի առաջ, այլ ոչ թե ծածուկ: Ինչևէ, Սմբատը շարունակում է, որ 11-ամյա մի երեխայի շնորհիվ դավադրությունը բացահայտվել է, և արքան փրկվել է դավադիր մահից: «Եւ ոչ արար արքայ նոցա չար ըստ արժանեաց իւրեանց, այլ խնամով»[50], — գրում է նա: Սա ոչ պակաս հետաքրքիր հանգամանք է: Մեր կարծիքով Լևոնը հավանաբար խուսափել է մահափորձի մասնակիցներին պատժելուց՝ խուսափելով նրանց հետագա վրեժխնդրությունից և կամ գուցե ներման արժանացնելով ինքն անձամբ նրանց «ծառայություններից» օգտվելու կարիք է ունեցել՝ հատկապես իր սպանության պատվիրատուների դեմ, որոնց դեմքը շատ շուտով պատռվել է:

Խոսքը 1272 թվականին թագավորական իշխանության դեմ երկրի քաղկեդոնական ազնվականության բարձրացրած ապստամբության մասին է: «Եւ յետ երից ամաց թագաւորութեան նորայ, խորհեցան չար ի վերայ թագաւորին, եւ կամեցան զՀայոց թագավորութիւնն ջնջել, եւ ինքեանք թագաւորել՝ պեղծ եւ ուրացող ազգն Հոռոմոց, սուտ քրիստոնեայքն եւ ստոյգ քաղկեդոնիկքն»[51], — այսպիսի ակնառու ատելությամբ է խոսում Գրիգոր Ակներցին խռովության մասնակիցների մասին: Ընդվզման պարագլուխը Համուսի տեր Վահրամն էր, ապստամբության կենտրոնը՝ Անարզաբա բերդաքաղաքը: Նրան միացել են Մոլևոնի տեր Լևոն, ինչպես նաև Ապլղարիբ իշխանները, որոնց 1273 թ. Սկևռայում գրված Ավետարանի Ստեփանոս անունով հիշատակագիրն անվանում է «շունք կատաղիք և ծառայք չարք»[52]: Հունադավան ընդդիմության գաղափարները հավանության են արժանացել նաև որոշ հայ ազնվականների շրջանում.

---

50 **Սմբատ**, *նույն տեղում*, էջ 253-254:

51 **Գրիգոր Վրդ. Ակներցի**, *Պատմութիւն Թաթարաց* (Բ տպագրութիւն), Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1974, էջ 66:

52 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար* (հետայսու՝ ՀՁՀ), կազմեց ***Ա. Ս. Մաթևոսյան***, Երևան, 1984, էջ 434:

«էր եւ ի հայոց համախոհ անաւրէնութեան սոցա դժնդակ եւ չար խորամանկութեամբ լցեալ ապերախտ եւ տիրանենգ վատըշուերք ոմանք»[53], – գրում է հիշատակագիրը: Այնուամենայնիվ, ըմբոստությունը շատ շուտով ճնշվում է հենց խանձարուրում. «... ինքեանք, որ զչարսն էին խորհել՝ անկան ի գուփն զոր փորեալ էին»[54]:

Նախ սպանվում է ընդվզման պարագլուխը: «Յանկարծ ի նրբափողոցս քաղաքին Սիսոյ իշխանն Համուսին հարեալ լինէր յումեմնէ զկարեվեր խոցումն մահու»[55], – գրում է Ստեփանոս գրիչը: Մատենագիրը, սակայն, ինչպես քիչ անց կտեսնենք, թաքցնում է Վահրամ իշխանի սպանության իրական հանգամանքները: Ըստ նրա՝ մյուս երկու իշխանները նույնպես պատժից չեն խուսափել. «Յայնժամ շրջափակեալ զամուրն Մոլեւաւն զաւրացն արքայի, եւ գործակցութեամբ աստուածապաշտից ոմանց հայկազանց նեքսաբանակաց, յետ սուղ ինչ աւուրց զամուրն յինքեանս գրաւէին եւ զԼեւոն տէր բերդին ձերբակալ արարեալ: Իսկ Ապլղարիպն վանդակաւ կախուեալ ի բերդէն հանդերձ եղբարքն ի բուռն անկանէր եւ զարդարադատ վճիռ մահու ընդունէր»[56]:

Դեպքերի մասին հետաքրքիր մանրամասներ է պահպանել նաև Բար Հեբրեոսը: Ըստ նրա՝ երբ ժողովուրդը հասկացել է, որ դավադրություն է կազմակերպվում Լևոն արքայի դեմ, բռնել է պարոնին՝ հավանաբար նկատի ունենալով Վահրամին: Այս լսելով՝ նրա գործակից իշխանները փախել և ամրացել են մի բերդում՝ օգնության կոչով դիմելով Ռումի սուլթանությանը: Լևոնն օղակել է բերդը և ներսի բնակչության օգնությամբ գրավել՝ ջարդելով անհնազանդ «հույն ազնվականներին»: Ապա նորից Վահրամի մասին գրում է, թե Լևոնը նրան ջախջախել է Անարզաբա բերդում:

Ասորի մաֆրիանի պատումից պարզվում է նաև, որ նախքան այդ, Լևոնը փորձել է ապստամբներին հնազանդության կոչել Անտիոքի հույն պատրիարքի միջնորդությամբ, բայց հասկանալով, որ վերջինս գործակցում է նրանց հետ, որոշել է բռնել և Կոստանդնուպոլիս ուղարկել: Բայց պատրիարքին հաջողվել է խույս տալ Լևոնից՝ մի խումբ հույն նավաստիների օգնությամբ փախչելով «Ռումի երկիր՝ թյուրքերի մոտ»[57]:

Այս երկու աղբյուրների բացթողումը լրացվում է Հեթում Պատմիչ Կոռիկոսցու վկայությամբ. «Ի սոյն ամի զարկին հաշիշիքն պարոն Վահրամայ»[58]: Կասկած լինել չի կարող, որ Վահրամի սպանությունը հաշիշիներին պատվիրված

---

53 Տե՛ս նույն տեղում:
54 Տե՛ս **Գրիգոր Ակներցի**, *Պատմութիւն*, էջ 66, հմմտ. **ՀՁՀ**, էջ 434:
55 Նույն տեղում, էջ 434:
56 Նույն տեղում, էջ 435:
57 **Bar Hebraeus**, *Chronography*, pp. 449-450.
58 **Հեթում Կոռիկոսցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 54:

հաջողված մահափորձ էր, որի առաջին շահագրգիռը կարող էր լինել ոչ այլ ոք, եթե ոչ հայոց թագավորը: Իսկ ինչ վերաբերում է խռովության մյուս երկու ղեկավարներին, ապա Հեթումը նրաց մասին գրում է, թե Ռումի սուլթանության մեծ վեզիր Փարվանայի և մոնղոլների ձեռքն են ընկել. «Մոլովոնին տէրն սիր Լեւոն ու Ապըլղարիպն մոտեցին ու բռնեցին ի Փարվանայն ու ի Թաթարն»[59]:

Խռովարարներին բաժին հասած պատիժներն է ակնարկում նաև Գրիգոր Ակներցին. «Եւ առաքեաց զմիամիտ սպասաւորսն իւր՝ ընբռնեաց զնոսայ, զոմն եսպան, զոմն եդ ի բանդի անզերծանելի, զոմն տարաւ առ Աբաղայ Ղանն յարեւելք եւ անդ յասախն հասուցին, եւ զայլ ամէն թշնամիսն ետուն ի ձեռս նորայ, եւ հրամայեցին՝ թէպէտ պահել, թէպէտ սպանանել»[60]:

Ամփոփելով վերոբերյալ սկզբնաղբյուրային տվյալները, հիմքեր ունենք մակաբերելու, որ ինչպես Սիր Ատանի, այնպես էլ այս երկու դեպքերը նույնպես «պատվերով մահափորձի» տպավորություն են թողնում:

Այժմ վերադառնանք Իբն Աբդ ալ-Զահիրի երկի վերոբերյալ հաղորդմանը Լևոն Բ-ի վճարած հարկի մասին, որ ժամանակագրական առումով վերջին վկայությունն է հայոց վերնախավի և իսմայիլականների հարաբերությունների մասին: Հատկանշական է, որ Իբն Աբդ ալ-Զահիրի վկայությունը փոխառել է Բայբարս ալ-Մանսուրին՝ մի փոքր փոփոխված ներկայացնելով. «Այդ թվականին եկան al-daʿwa-ի դեսպանները՝ ուղարկված Սսի տիրոջ մոտ, և բերեցին նրա համար սահմանված և al-daʿwa-ի կողմից սուլթանական գանձարան հանձնվելիք գումարը, որն ամեն տարի կազմում էր 11600 դիրհամ»[61]: Ինչպես կարելի է տեսնել, Բայբարսի կենսագիրը 11600 դիրհամը կոչում է երկու տարվա հարկ, իսկ Բայբարս ալ-Մանսուրին գրում է, թե դա մեկ տարվա համար վճարելիք գումարն էր: Իսկ այն հարցի բանալին, թե ինչու էր հայոց արքան հարկագումար վճարում իսմայիլականներին, գտնում ենք Իբն Աբդ ալ-Զահիրի Al-Rawḍ al-zāhir fī sīrat al-Mālik al-Ẓāhir («Ծաղկուն պարտեզ ալ-Մալիք ալ-Զահիրի կյանքի մասին») երկում: Նա հիջրայի 665 թ. (1267 թ.) թվականի տակ գրում է. «Ջումադա ալ-ախիրա ամսին եկան al-daʿwa-ի դեսպանները՝ բերելով մեծ քանակությամբ ոսկի և ասացին. «Սա այն գումարն է, որ որպես հարկ վճարում էինք ֆրանկներին[62] և որ այժմ բերել ենք մուսուլմանների գանձատուն՝ իսլամի

---

59 Նույն տեղում:

60 **Գրիգոր Ակներցի**, *Պատմութիւն*, էջ 66:

61 **Baybars al-Manṣūrī**, *Zubdat al-fikra fī tārīḫ al-hiǧra*, bi-taḥqīq ***Dunāld Rītšārdz***, Bayrūt, 1998, ṣ. 24.

62 Խոսքը Հիվանդախնամներին և Տաճարականներին ասորիքյան հաշիշիների վճարած տուրքի մասին է: Այն այսպես ասած «չհարձակման խոստում» էր առ այն, որ հիշյալ ասպետական

համար կռվողների համար ծախսելու: Սա ուրախություն պատճառեց սուլթանին, որովհետև իսմայիլականների կարգը (բնագրում՝ bayt al-daʿwa) սովորություն չուներ շողոքորթել արքաներին և անգամ [իրենց] հարկատու էին դարձրել խալիֆաների և արքաների: Նրանք տարեկան հարկ ունեին սահմանած նաև եգիպտական թագավորության (իմա՝ սուլթանության) համար, բայց [այժմ՝] սուլթանի (իմա՝ Բայբարսի) կառավարման օրոք, դարձել էին նրա ստորակաները և հարկ էին բերում, ինչպես որ նշեցինք»[63]: Ընդ որում, իրենց հարևաններից (և ոչ միայն) հարկ պահանջելը իսմայիլականների համար սովորական երևույթ էր: Ֆրանսիացի պատմիչ՝ Լուի VIII (կառ. 1226-1270 թթ.) արքայի կենսագիր Ժան դը Ժուանվիլը (մահ. 1317 թ.) մի ուշագրավ պատմություն է պատմում: Ըստ նրա՝ երբ Ֆրանսիայի արքան, որ առաջնորդում էր Սուրբ Երկիր ուղղված 7-րդ խաչակրությունը, ափ է իջել Պաղեստինում, նրան են ներկայացել «Լեռների ծերունու» (այսպես է կոչում իսմայիլականների առաջնորդին՝ գերագույն dāʿī-ին) պատվիրակները և հարկ պահանջել[64]:

Քրիստոնյա շատ միապետներ նախընտրում էին տարեկան որոշակի գումար վճարել կամ նվերներ ընծայել նրանց առաջնորդին, քան թե գլխներին մշտապես կախված ունենալ նրանց ձեռքով սպանվելու վտանգը, ինչպես որ Կիրակոս Գանձակեցին է հաստատում. «Վասն այնորիկ երկնչին ի նոցանէ ամենայն իշխանք եւ թագաւորք եւ տան հարկս նոցա... Եւ այսպէս զբազում մեծամեծս սպանանեն նոքա, որք ոչ հարկին նոցա...»[65]: Ամփոփելով՝ եզրակացնում ենք, որ ալ-Մանսուր Կալավունի վարքագրի ներկայացրած դրվագում իսմայիլականները՝ այժմ արդեն որպես գործիք և հլու կամակատարներ մամլուքյան իշխանությունների ձեռքում, հայոց արքայից նրա իսկ կյանքի անվտանգության դիմաց իրենց կորզած գումարն է, որ վճարելու էին տարել սուլթանական գանձարան:

կարգերը կիսուսափեն իրենց նկատմամբ պատերազմական բաց գործողություններից: Փոխարենը նրանք սպանության սպառնալիքով նույնպիսի տուրք կամ ընծա էին պահանջում իրենց այլ հարևաններից:

63 **Ibn ʿAbd al-Ẓāhir**, *Al-Rawḍ al-zāhir fī sīrat al-Mālik al-Ẓāhir*, bi-taḥqīq ʿ***Abd al-ʿAzīz al-Ḫuwayṭir***, al-Riyāḍ, 1976, ṣ. 274: **Ibn al-Furāt**, *Tārīḫ al-duwal wa-l-mulūk*, MS AF122, Vienna, Österreichische Nationalbibliothek, fol. 117a; **al-Maqrīzī**, *al-Sulūk*, ğ. 1. 2, s. 557:

64 *Memoirs of the Crusades* by **Villehardouin and De Joinville**, trans. ***F. Marzials***, London, 1908, pp. 248-251: Ըստ ժամանակագրի՝ հաշիշիները ևս մի տարբերակ են առաջարկել Ֆրանսիայի արքային՝ միջնորդել, որ չեղարկվի Տաճարականների և Հիվանդախնամների նկատմամբ իրենց ունեցած հարկային պարտավորությունը: Տե՛ս նաև **Nasseh Ahmad Mirza**, *Syrian Ismailism,* pp. 51-53.

65 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 226-227:

GAGIK DANIELYAN

THE ASSASSINS AND THE KINGS OF CILICIAN ARMENIA

Keywords: Ismāʿīlism, Nizārīs, Assassins, Cilician Armenia, Hetʿum I, Levon II, the Mamluk Sultanate, Baybars al-Bunduqdārī, Armenian-Mamluk relations, Northern Syria, political murders.

The Nizārī Ismāʿīlis, also known as Assassins, were a heretical religio-political group of Shīʿa Islam. The major residence of Nizārī leaders was Alamut, an impregnable fortress in the Elburz Mountains of Iran. In the 12th century, daʿīs (missionaries, preachers) were constantly dispatched from Alamut to Syria to create Nizārī communities there and to lead them. The Syrian Nizārī leaders generally accepted the suzerainty of the imams of Alamut. However, during the rule of Rashīd al-Dīn Sinān, known to the Franks as "the Old man of the Mountain", the Syrian Assassins gained considerable independence from Alamut.

The main reason for the viability of the Nizārī state was the distinctive method of struggle they acquired. Their special policy of assassinating prominent religious, political and military enemy figures made them an infamous and dangerous power in the region. For undertaking assassination missions, the Nizārīs used self-sacrificing devotees called *fidāʾī*s. Not surprisingly, through their whole history the Assassins were striking terror in the hearts of the most powerful Middle Eastern rulers. Anyone who dared to have problems with them, risked to fall beneath their daggers. The majority of political murders and assassination attempts in the 11th-13th cc. were attributed to them. Hundreds of Muslim and Christian rulers such as caliphs, sultans, viziers, emirs, kings and princes died at the hands of Nizārī fanatics. The Assassins even demanded annual tributes from the rulers of adjacent states. Many Christian monarchs, fearful of sudden assassination, preferred to pay them tribute or to send them gifts regularly.

The Assassins had a reputation of professional murderers. As a result, they were sometimes recruited by foreign rulers to annihilate their political adversaries or enemy leaders. The Nizārīs were also well-known in Cilician Armenia and were called "hašiškʿ," "mulhedkʿ" or "mlhetkʿ" by medieval Armenian historians. Armenian and Mamluk historical sources contain some interesting information on the relations between the Assassins and the ruling circles of the Armenian kingdom. Not only foreign enemies employed them against Armenian kings but also the latter sometimes used their services to punish local rebellious barons.

ГАГИК ДАНИЕЛЯН

АССАСИНЫ И ЦАРИ КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ

Ключевые слова: Исмаилизм, низариты, ассасины, Киликийская Армения, Хетум I, Левон II, Мамлюкский султанат, Байбарс аль-Бундукдари, армяно-мамлюкские отношения, Северная Сирия, политические убийства.

Низариты, также называемые ассасинами, были еретической религиозно-политической группой исмаилитского течения шиитского ислама. Главным оплотом низарийских исмаилитов был Аламут, неприступная крепость в Эльбурских горах в Иране. В XII веке *да'и* (миссионеры, проповедники), посылавшиеся из Аламута в Сирию, создали там постоянные низаритские общины и руководили ими. Вожди сирийских низаритов, как правило, принимали сюзеренитет аламутских имамов, хотя во время правления Рашид ад-Дина Синана, известного франкам как «Старец с горы», сирийские ассасины получили значительную независимость от Аламута.

Основной причиной жизнеспособности Государства исмаилитов-низаритов был специфический метод борьбы. Их особая тактика ликвидации враждебных им религиозных, политических и военных деятелей скоро сделала их печально известной и крайне опасной силой во всём регионе.

Для выполнения покушений Низариты использовали фанатично и слепо преданных вождю воинов-самоубийц, которых называли *фида'и*. Неудивительно, что на протяжении всей своей истории ассасины вселяли ужас в сердца самых влиятельных ближневосточных правителей. Любой, кто осмеливался враждовать с ними, рисковал погибнуть от их кинжалов. Большинство политических убийств или покушений в XI-XIII вв. были приписаны именно им. Сотни христианских и мусульманских правителей (халифы, султаны, везири, эмиры, короли и принцы) погибли от рук низаритских фанатиков. Ассасины также требовали дани от правителей соседних государств. Многие христианские монархи, желая оградить себя от покушений ассасинов, предпочитали платить им ежегодную дань или отправлять им регулярные подарки.

Так как ассасины пользовались репутацией профессиональных убийц, их порой вербовали и иностранные правители для уничтожения своих политических противников или вражеских лидеров. Низариты были широко известны также в Киликийской Армении. Средневековые армянские историки называли их “*h*ашишк” или “мул*h*едк” или “мл*h*етк”. Армянские и мамлюкские исторические источники содержат довольно интересные сведения об отношениях ассасинов с правящими кругами Киликийского Армянского царства. Не только иностранные враги использовали ассасинов против армянских царей, но и последние иногда пользовались их услугами, чтобы наказать местных мятежных баронов.